

Տ. Սահմակյան

ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ԱՊԱՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ ՍՅՈՒՆԻՔՈՒՄ
10-ՐԴ ԴԱՐՈՒՄ

9—12-րդ դարերում Սյունիքը տիպիկ ֆեոդալական երկիր էր, ֆեոդալիզմի բոլոր առանձնահատկություններով։ Գոյություն ունեցող երկու հակադիր դասակարգերի՝ շահագործող, հողատեր աշխարհիկ ու հոգևոր ֆեոդալների և շահագործվող ու ճորտ գյուղացիության պատմությունը ընթանում է դասակարգային պայքարով, որն առանձնապես սուր բնույթ է ստանում 10-րդ դարում։

Սյունիքի գյուղացիության սոցիալական շարժումների մասին տեղեկություններ են պահպանվել դեռևս 5-րդ դարից։ 5-րդ դարում Սյունիքի «շինականներ» կովի են դուրս եկել շահագործողների դեմ, որը հայտնի է Մծղնեական շարժում անունով։ Այդ շարժումը ճնշվում է 443 թվականին Վասակ Սյունու կողմից, որն արյան մեջ խեղդում է ապստամբներին։

Արաբական տիրապետության շրջանում ծավալված Պավլիկյան շարժումը արձագանք գտավ նաև Սյունյաց աշխարհում։

Սոցիալական շարժումները Սյունիքում լայն բնույթ են ստանում 10-րդ դարում։ Այդ շարժումները պատմության մեջ հայտնի են ցուրաբերդցիների ապստամբություն անունով։ Այս շարժման մասին շատ աղքատ են մատենագրական տեղեկությունները։

Սյունիքի գյուղացիական ապստամբության հիմնական պատճառներից մեկն այն էր, որ արաբական տիրապետության շրջանից սկսած Սյունյաց իշխանները՝ ընդարձակելով իրենց տիրապետության սահմանները, իսկ արաբական տիրապետության անկումից հետո ձեռք բերելով հզոր քաղաքական ուժ և բացարձակ ինքնուրույնություն, սկսում են մի կողմից խիստ շահագործման ենթարկել հպատակ գյուղացիությանը, մյուս կողմից՝ բազմաթիվ գյուղեր իրենց ընակիշներով նվիրել եկեղեցիներին ու վանքերին։ Վերջիններս ավելի դաժանորեն էին շահագործում հպատակ և ճորտ գյուղացիությանը։ 10-րդ դարում Սյունիքում դրամական շրջանառության ընդարձակման ու իշխանների կողմից եկեղեցիներին կալվածքներ նվիրելու սովորության մասին վկայում է Մաքենոցաց եկեղեցու վրա Սյունյաց Սուփան իշխանի թողած հետեւյալ արձանագրությունը, որ վերաբերում է 901 թվականին։

«Ես Սուփան Սիմեաց իշխան, շինեցի զՄաքենոցաց եկեղեցիս, և անխնայաբար զարդարեցի պատուական սպասութ և աստուածային կտակարանաւթ և ետու զսեփական տեղն մեր ի սա, որ ըստ անուան եկեղեցւոյս Աստուածածին ասի, ամենայն սահմանափ՝ լեռամբ և դաշտիւ, և ետու որս ձկանց, զբողաշեն, սեղանոյն, և ելթ հարիւր դրամ ի Դեղանագետոյ զապալեն, երկու հարիւր դրամ ի Կաթկայ, երեք հարիւր յիսուն յԱնմեռեն, որ լինի ՌՄՇ (1250. Տ. Ա.) դրամ...»¹.

¹ Կ. Կոստանտին, Վիժական տարեգիր, էջ 5, 1913, Պետարքուրդ։

10—12-րդ դարերում Հայաստանում անշարժ և շարժական մեծ հարրստություն է կենտրոնանում հոգեոր ֆեոդալների ձեռքին։ Ժամանակի պատմիչ Մատթեոս Ուռհայեցին հայտնում է, որ Արծն քաղաքի Դավթուկ քորեպիսկոպոսը ունեցել է 40 ուղտի բեռ գանձ և իր կալվածքները հերկելու համար բազմաթիվ եզներ։

«Այլ զոսկոյ և զարծաթոյ և զդիպակաց աւելորդ է ասել, — գրում է Ուռհայեցին, — վասն զի ոչ արկանի ընդ գրով. բայց զայս բազում անգամ լուեալ է մեր ի բազմաց յաղագս քորեպիսկոպոսին՝ որ ասէին Դավթուկ, եթէ զգանձատունն նորա Աբրիհիմն էառ և քառասուն ուղտ բարձան զգանձարանն նորա ութ հարիւր վեցկի եզանց ելանէին ի տանէ նորա¹։

9-րդ դարի վերջերին և 10-րդ դարի սկզբում Հայաստանն ակտիվ կերպով մտնում է միջազգային առևտրական ոլորտի մեջ։ Առևտրական հարաբերությունները զարգանում են նաև Սյունիքում։ Սյունյաց իշխանները, առավել ևս մեծ հարստությամբ հոշակված հոգեոր ֆեոդալները, կապվում են արտաքին շուկայի հետ և իրենց հպատակ գյուղացիներին ենթարկում դաժան շահագործման՝ ձգտելով շատ մթերքներ կուտակել արտաքին շուկա հանելու համար։

Սյունիքի գյուղացիական ապստամբության անմիջական առիթը լինում է այն, որ Սյունյաց իշխանները 10-րդ դարի առաջին տասնամյակում մի քանի գյուղեր իրենց բնակիչներով նվիրում են Տաթեկի վանքին։ Այդ գյուղերի «շինականները» այդ դեպքից անմիջապես հետո է, որ դիմում են ապստամբության Հայտնի է, որ 9—12-րդ դարերում Սյունիքի ֆեոդալական հողատիրության սիստեմում գոյություն է ունեցել կալվածքների մշակման երկու սիստեմ։ Մի դեպքում ֆեոդալը անձամբ ինքն էր վարում իր կալվածքների տնտեսությունը, ընդարձակում այն՝ գյուղացիների ծանր շահագործման միջոցով, մյուս դեպքում՝ ինքը ֆեոդալը անձամբ չէր զբաղվում իր կալվածքների տնտեսության գործով, այն հանձնում էր գյուղացիներին, շմիջամտելով նրանց աշխատանքի պրոցեսին։

Վերջին սիստեմով, կարծես թե, հողն անցնում էր գյուղական համայնքին և, ինչպես էնգելսն է նշում, գյուղական համայնքի միջոցով որոշ շափով սահ-

¹ Ամենայն հավանականությամբ Մատթեոս Ուռհայեցու «Ժամանակադրության» մեջ՝ ձեռադրերի արտադրության ժամանակ թյուրիմացարար «Զ»-ի փոխարեն դրվել է «Պ» և այսպիսով «Շութսունր» դարձել է «Շութհարյուր»։ Մեր կարծիքով պետք է լինի «Շութսուն վեցկի եզանց»։ Հանդուցյալ ակադեմիկ Հակոբ Մանանդյանը Մատթեոս Ուռհայեցու «Ժամանակագրության» այդ հատվածը աշխարհարար թարգմանելով դրում է. «Նրա տնից (քորեպիսկոպոս Դավթուկի — Տ. Մ.) գուրս էին ելնում ութհարյուր զութան, որոնց յուրաքանչյուրին լծված էին վեց լուծ եզա։ Դուրս է զալիս, որ քորեպիսկոպոս Դավթուկն ունեցել է 4800 լծկան եղի։ Այդքան լծկան եղ ունենալու դեպքում պետք է ենթադրել, որ նա կունենար դրեթե նույն քանակի այլ անասուններ, իսկ այդ անասունները խնամելու և 800 զութանով հոդ մշակելու համար՝ նա պետք է ունենար մի քանի հազար հալատակ գյուղացիներ կամ ճորտեր, որը 10—12-րդ դարերի հայաստանի պայմաններում մի քորեպիսկոպոս ունենալ չէր կարող։ Պետք է նշել, որ Մանանդյանը «վեցկի եղանց ելանէին» դարձվածքը սխալ է թարգմանել։ Այժմ էլ Սիսիանի բարրառում արորին ասում են «վեսկի» և լծկան եղներն ըստ նրանց ուժի բաժանում են երեք կարդի՝ կալի եղ, «վեսկու» (արորի կամ դութանի) եղ և սայլի եղ։ Մեր կարծիքով «վեցկի եզանց ելանէին» պետք է թարգմանել «գուրս էին ելնում (հերկի) «վեսկի» (արոր կամ գութան) լծելու եղներ»։ Ամենայն հավանականությամբ լեռնոտ հայաստանում քորեպիսկոպոս Դավթուկը կունենար այնքան կալվածքներ, որի հերկման համար բավական էր 10-ր դութան՝ ութուն եզներով։

մանափակվում էր ճորտ գյուղացիների շահագործումը ֆեոդալների կողմից։ Հիմնականում այս երկրորդ սիստեմով էլ վարում էին իրենց տնտեսությունը Սյունիքի աշխարհիկ ֆեոդալները 10—12-րդ դարերում։ Այդ պատճառով Սյունյաց իշխանների և հպատակ գյուղացիների դրությունը վանքերին ենթակա գյուղացիների դրության համեմատությամբ որոշ շափով տանելի էր, համեմատաբար թեթև։ Այդ պատճառով էլ անցնելով Տաթևի վանքին՝ գյուղացիները չեն հաշտվել հոգևորականության հետ, որ գերադասում էր եկեղեցական տնտեսությունը վարել առաջին սիստեմով։ Առանց այդ էլ դաժանորեն շահագործվող գյուղացիությունը գրգոված վիճակում էր։ Տաթևին շրջակա մի քանի գյուղերի հանձնումը վանքին արագացնում է ապստամբությունը։ Սիալվում է պատմաբան Զավախաշվիլին, հաստատելով, թե իր Սյունիքում աշխարհիկ ֆեոդալներին հպատակ գյուղացիության դրությունն ավելի ծանր է եղել, քան վանքերին ենթակա գյուղացիների վիճակը։ Այդ մասին Զավախաշվիլին գրում է. «Հաճախ խոշոր կալվածատերերը եկեղեցիներին ու վանքերին մեծ քանակությամբ հողեր էին նվիրաբերում իրենց բնակիչներով և գյուղեր-ավաններով հանդերձ, քանի որ այսպիսի դեպքերում նվիրաբերված գյուղին կամ մենակյաց ճորտ գյուղացուն սովորաբար անձեռնմխելիություն է շնորհվում և պետական հարկերից անգամ ազատվում, ցածր խավն առանձնապես մասնավոր կալվածատերերի ճորտերն եկեղեցուն ճորտ դառնալուց ոչ միայն չէին խուսափում, այլև ընդհակառակը՝ սովորաբար ուրախ էին լինում։ Նրանց նյութական դրությունն իրեն ապահարկային ճորտերի, իհարկե, ավելի լավ էր, քան մնացած ճորտերինը»¹.

Պատմաբանների մի այլ խմբի կարծիքով Սյունիքի գյուղացիական ապստամբության մասնակիցները եղել են բացարձակապես ազատ հողատեր գյուղացիներ։ Այդ տեսակետի կողմնակիցները սովորաբար հիմնվում են Ստեփանոս Օրբելյանի վկայության վրա, որ հաստատում է, թե ապստամբները «զի հին հայրենատէրք էին»։

Մեր կարծիքով այս արտահայտությունը հետևյալ իմաստն ունի.

Քանի որ իշխանները հպատակ գյուղացիներին էին հանձնում հողը, շմիջամտելով նրա մշակման պրոցեսին, օգտագործմանն ու բաժանմանը, կարելի է ենթադրել, որ այդպիսի գյուղացիները իրենց համարել են «հայրենատեր», սակայն այդուհանդերձ այդ գյուղացիները եղել են Սյունյաց իշխանների հպատակները, նրանց լիակատար ենթական։

Ապստամբության մասնակիցների հիմնական մասը եղել է աշխարհիկ և հոգևոր ֆեոդալների հպատակ և ճորտացման պրոցեսում գտնվող գյուղացիությունը։ 10-րդ դարի սկզբում միջֆեոդալական կոիվները, Ատրպատականի արաբական էմիրության հաճախակի հարձակումները Սյունիքի վրա գյուղացիությանը գրել էին ծանր պայմանների մեջ։ Ապա վրա էր հասել անբերրիությունն ու սովը։

Ահա այս պայմաններում 10-րդ դարի սկզբում հիմնվում է Տաթևի վանքը, որը բոլոր միջոցներով ձգում էր լայնացնել իր կալվածքները, ավելացնել ենթակա ճորտերի քանակը։

Գյուղացիության հողագրկման և ճորտացման պրոցեսը Սյունիքում

¹ Զավախախավիլի, Նյութեր հայաստանի սոցիալական շարժութերի պատմության համար, Հայ. հրատ., Երևան, 1937, էջ 12—13։

սկսվում է 10-րդ դարի սկզբում։ Հայտնի է, որ 13-րդ դարում Հայաստանում գյուղացիությունը յիշակատար ճորտացված վիճակում էր։ Այդ են հաստատում 1224 թվականից Դատի վանքի վրա մնացած արձանագրությունը, ինչպես և մատենագրական այլ աղբյուրներ։ Միիթար բոշը օրինականացնում է այն, որ արարչի կողմից ազատ ստեղծված մարդիկ պարտավոր են ծառայել իրենց տերերին, այսինքն ճորտացվել։ «Դատաստանագրքի» «Յաղագս դատաստանաց շինականաց» գլխում Գոշը գրում է։

«Ազատ յԱրարչէն եղեւ մարդկայինս բնութիւն այլ ծառայեալ տէրանց յաղագս պիտոյից եղեւ հողոյ և ջրոյ։

Եւ զայս պատշաճ կարծեմ դատաստան—զի թողեալ զտէրունիսն ազատէ ու և կամեսցի կալ։ Ապա թէ այսմ ոչ ներէ ոք ի տէրեանցն եւ բռնադատէ զգնացեալսն անդրէն դառնալ, զկնի մահուան հօրն ազատէն որդիք ծնեալք այլուր եւ ոչ անդ»¹։

Այնուհետև «Յաղագս դատաստանայ ծառայից առնելով ըստ օրինաց» գլխում շարունակում է. «Եթէ պատահի քրիստոնէի գնել ծառայ քրիստոնէայ րստ օրինացն վեց ամ ծառայել եւ ելանել յեօթներորդ ամին եղիցի մեզ — յորժամ րստ գնոյ իւր ծառայեսցէ՝ ելցէ ազատս, եթէ ինքն միայն մտեալ իցէ միայն ելցէ, եւ եթէ կնաւ հանդերձ մտեալ իցէ — ելցէ եւ կինն ընդ նմա։ Ապա թէ տէր իւր տացէ նմա կին եւ ծնանիցի նմա որդիս եւ դստերս, կինն եւ որդիքն տեառնն նորա եղեցին եւ նա միայն ելցէ փրկանօք ելցեն եւ նոքա։ Ապա թէ պատասխանի տուեալ առիցէ ծառայն — սիրեցի զտէր իմ եւ զկին իմ եւ զորդիս իմ եւ ոչ գնասցէ յազատութիւն, տարցի զնա տէր իւր յեկեղեցի Աստուծոյ եւ քահանայիւք եւ հաւատարիմ վկայիւք եւ գրով առցէ զնա ծառայ յաւիտեան։ Եւ մի յաղագս այնորիկ փոյթ կալցի թէ եւ կարիցէ ազատ լինել, զի ըստ առաքելոյ ի տէր կոշեցեալ ծառայն ազատ տեառնէ»²։

Հայ շինականների ճորտ լինելու մասին 1224 թվականի Դատի վանքի մի արձանագրության մեջ հայտնվում է հետեւյալը. «Ես Գրիգոր որդի Հասանայ, որ մեծաւ յուսով տուի ի Դատի գերեզմանս շորս տուն շինական հոգոյ իմոյ յառաջնորդութէան տեառն Գրիգորիսի։ Այդ ով խափանէ յառաջնորդաց զիմ ժամն կամ յազգաց իմոց կամ յաւատարաց, զշինական յէտ առնելով իմ մեղույն պարտական է և—ն»³։

Այս վկայություններից հետեւում է, որ 11—12-րդ դարերում արդեն գյուղացիությունը ենթարկվել է ճորտացման, ուրեմն և ճորտացման պրոցեսը սկսվել է 10-րդ դարից։

10—12-րդ դարերում ճորտատիրական հարաբերությունները խիստ կերպով տարածված էին վանքապատկան կալվածքներում, 9-րդ դարի երկրորդ կեսին և 10-րդ դարի ընթացքում կառուցվում են մի շարք վանքեր և եկեղեցիներ (Սևանա կղզու, Շողավանի, Վանեվանի եկեղեցիներ, Նորավանքի, Մաքինացոց, Խոտակերաց, Տաթևի վանքերը և այլն), որոնց համար ձեռնադրում են բազմաթիվ հոգեւորականներ։ Տաթևի վանքի կառուցումից հետո շրջակա գյուղերից վանք են հավաքվում բազմաթիվ արեղաններ, որոնք բնականաբար պետք է ապրեին ենթակա գյուղացիների հաշվին։

¹ Մխիթար Գու. Դատաստանադիրք Հայոց, Վազարշապատ, 1880, լ 9 320.

² Նույն տեղում, էջ 335.

³ Կոստանդնուպոլիս. Վիմական տարեդիր, Պետերբուրգ, 1913, էջ 68։

Գյուղացիների շահագործումը սկսվել է վանքի կառուցումից, վանքը բարձրացել է «շինականների» ձրի և ծանր աշխատանքով։ Տաթեսի վանքին ենթակա «շինականների» ձրի աշխատանքով է կառուցվել նաև Վարարակի 12 կիլոմետր երկարություն ունեցող ջրանցքը Հաբանդ գավառում (Գորիսի շրջանում), տնկվել են մի շարք պտղատու այգիներ։ Տաթեսի վանքում կենտրոնացվել են կուտակվել էր մեծ քանակությամբ հարստություն։ Ստեփանոս Օրբելյանի տվյալներով 10-րդ դարում, բացի վերը նշված կալվածքներից, Տաթեսի վանքն ունեցել է մեծ քանակությամբ մանր և խոշոր եղբերավոր անասուն։

10-րդ դարի սկզբում Տաթեսի վանքի հոգեորականության տիրապետության դեմ բռնկվում է գյուղացիական ապստամբություն։ Ծուրաբերդցիների այս ապստամբությունը կարելի է բաժանել երեք էտապի։ 910-ական թվականների, 930-ական թվականների և ապա 990-ական թվականների ապստամբության։

910-ական թվականներին ապստամբում են Տաթեսի վանքին նվիրված ցուրաբերդցիները, որոնք հրաժարվում են ենթարկվել վանքին և նրա օրենքներին։ Ստ. Օրբելյանը գրում է. «...Տայ և Աշոտ՝ գահերէց իշխանն Սիւնեաց, զՅօղունի գիւղ ի Հաբանդ գաւառի և զԲնունիք ի Սիւնիս ի Ծղուկք գաւառի, շնորհէ և զօուր բերդովն և աղարակօքն և զգետն ծուրայ և զվանքն, զՏանձատափ և զԴիոձածորն...»

Իայց թէպետ զայս ամենայն տուրս արարին, զբնակիչս բերդին Ցուրայ ոչ կարացին հանել ի տեղույն. զի հին հայրենատէրք էին և բարբարոսք և պիղծ մարդիկ. այսպէս և ոչ զՏամալէկն, որ մերձվանիցն էր ի հանդէպն՝ կարացին սեպհականել, զի և նոքա նույնպիսիք էին, էր և աւազականոց մի Բերդ անուն հանդէպ վանիցն, յայնկոյս մեծի գետոյն յափն քարին, որ Աւելադաշտն կոշեն, ի ներքին Ուսակին՝ և զայն ևս ոչ հալածեցին. յորոց վտանգ ոչ սակաւ հասանէր եղբայրութեանն։ Ցետոյ թէպէտ յայլ և այլ ժամանակս և զայնս ևւ սեպհականեցին հայրապետքն, բայց յետոյ ի խանդարել հայրապետանոցին և յաւերիլ տանն՝ քակեցան այս հոգեցատուր ժառանգութիւնք. և ի բառնալ հակառակութեանն՝ դարձեալ մի մի վերստին անդիէն հաստատեցին»¹.

Այս տողերը ցույց են տալիս, որ այդ շարժումը ճնշվել է տիրող դասակարգի կողմից։ Ապստամբությունը սկսվելու ճիշտ թվականը անհայտ է։ Ստեփանոս Օրբելյանը ապստամբությունը նկարագրում է որպես 916 թվականին կատարված դեպք, Ղեռնդ Ալիշանը իր ուսումնասիրության մեջ ապստամբության սկիզբը համարում է 915 թվականը։ Ապստամբության առաջին էտապը տեսլ է բավականաշափ երկար աղբյուրները վկայում են, որ այն ճնշվելուց հետո ապստամբության վայրերում եղել են մեծ ավերածություններ, և որ այդուհանդերձ երկար ժամանակ ապստամբները հրաժարվել են ենթարկվել վանքին։

Ապստամբները ամրանում են Ցուրաբերդում. Նրանք առաջին հերթին հաշիվ են տեսնում իրենց կեղեքող հոգեոր ֆեոդալների հետ և ապա զինված զոկատներով հարձակվում Տաթեսի վանքի վրա, սպանում աբեղաներից շատերին, ավերում վանքը, վերցնում վանքի գուլքը և տանում Ցուրաբերդ։ Այդ դեպքի մասին Սյունյաց Հովհաննես եպիսկոպոսը թողել է հետեւյալ հիշատակությունը.

¹ Ապստամբության կենտրոն Ցուր կամ Ցուրաբերդի անունով. Ծուրաբերդը հին Ցուրավանս գյուղն է, որը հնչյունաբանական փոփոխության ենթարկվելով այժմ կոչվում է Ավարանց (Գորիսի շրջանում)։

² Ստեփաննոս Օրբելյան. Պատմութիւն տանն Սիսական, էջ 167—168։

«Ես Հովհաննէս՝ շնորհիւն Աստուծոյ եպիսկոպոս Սիւնեաց, գրեցի զայտ վճիռ իմով ձեռամբս հրամանաւ աստուածազօր իշխանին Սիւնեաց Սմբատայ. զի եհաս մեզ վտանգ տագնապի ի շար և յանաստուած ելուզակացն, որ բնակեալ էին ի Ցուրայ բերդ անուն քարին, որք յանկարծակի յարուցեալ ի վերայ յոգնաժողով եղբարցն ի գիշերի՝ կողոպտեցին զյարկս ամենայն, և զոմանս սպանին ի ծերոցն: Իսկ մեք տիսեալ զյանպիսի աղէտս՝ առեալ զսուրբ խաչն՝ հալածական եղաք յայլ աշխարհ և կրօնաւորքս ամէն ցան և ցիր եղեն: Ապա ազդ եղեալ աստուածապահ տեառն Սմբատայ և եկեալ դարձոյց զմեզ այս րէն...»¹.

Նշանակում է ապստամբությունը շատ լայն բնույթ է կրել, որի հետեանքով Հովհաննես եպիսկոպոսը և արեղաների մի մասը փախել են «օտար աշխարհ», այսինքն փախել են ապստամբության վայրից, բայց ոչ Սյունիքից դուրս, հավանաբար Սյունիքի Բաղր գավառու:

Ապստամբներն այնքան են վրդովված եղել շահագործող հոգեորականության ու եկեղեցու գեմ, որ վերցրել են սուրբ համարվող Տաթևի վանքի մեռոնի կաթսան և ջարդել, ժայռից մեռոնը թափել ցած:

Ապստամբների ձեռքից փախած Սյունյաց Հովհաննես եպիսկոպոսը դիմում է Սյունյաց Սմբատ իշխանի օգնությանը. իսկ վանքի 500 միաբանները ցրվում են և թաքնվում Սյունիքի գյուղերում:

Լեռներով ու անդնդախոր ձորերով շրջապատված Սյունիքի ապստամբները հնարավորություն շեն ունեցել կապ պահպանել Հայաստանի մյուս վայրերի ապստամբների հետ: Ապստամբները մինչև 916 թվականը պահպանում են իրենց նախկին իրավունքները, շենթարկվելով Տաթևի վանքին, իրենց գիրքերը ամրապնդելուց հետո Սյունյաց իշխանները 916 թվականին սկսում են ճնշել ապստամբությունը: Տեղի են ունենում համառ մարտեր. ապստամբ գյուղացիները պարտություն են կրում Սմբատ իշխանի կազմակերպված զորքերի կողմից: Նա գրավում է ապստամբության կենտրոն Ցուրաբերդը և ավերում այն, ցուրաբերդցիների հողերը կրկին հանձնում Տաթևի վանքին:

Ապստամբության ճնշումից հետո Սմբատ Սյունին մի քանի այլ իշխանների հետ Տաթև է բերում Հովհաննես եպիսկոպոսին՝ կրկին նոան հանձնելով Տաթևի վանքը: Հովհաննես եպիսկոպոսը Սմբատ Սյունու պահանջով գրում է մի կտակ Ցուրաբերդը վերականգնելու և իր կալվածքները վերշնականապես Տաթևի վանքին հանձնելու մասին: Կտակում ասվում է. «Այլ հրամանաւ նորին Սմբատայ՝ Սիւնեաց իշխանի, գրեցի իմով ձեռամբս կտակ յափտենական և կնքեցի իմով սովորական մատանեաւս, և եղի յեկեղեցւոչս, զի յետ ժամանակաց մի՛ ոք յանդգնեսցի զնոյն ոճիրս գործել: Արդ՝ եթէ ոք հրամանիս մերոյ հակառակի և առնու զծուր ի սուրբ եկեղեցւոյս և կամ կամի զսուտ քարդ բերդ անուանել և շինութիւն խորհիլ և կրկին հալածումն յարուցանել սուրբ հեկեղեցւոյս՝ այնպիսին նզովեալ եղիցի յԱստուծոյ ամենակալէ և յամենայն սրբոց և ի մէնչ, և մի՛ հասցէ ողորմութեան... եղեւ այս ի թուականիս Հայոց 364 (915, S. U.)»²:

Ապստամբության առաջին էտապում ցուրաբերդցիներից հետ շեն մնացել նաև հարեան Տամալեկս գյուղի գյուղացիները: Այդ մասին տեղեկություն է.

¹ Ստեփանոս Օբրելյան. Պատմութիւն տանն Սիսական, էջ 181.

² Նույն տեղում, էջ 182:

տալիս Ստեփանոս Օրբելյանը. նա գրում է. «Եր և հանդեպ վանիցն տեղի մի ապստամբանոց, որ Տամալէկս կոչէին. և բազում և մեծամեծ վիշտս և նեղութիւնս հասուցեալ էին վանիցն, զոր տէր Յովհաննէս, թէկ բազում անգամ ջանաց, ոչ կարաց հալածել զբնակիշս և սեպհականել զտեղին: Ապա ի ժամանակս աստուածապատիւ և հոգենոր տեառն Յակոբայ եկն մեծ տիկինն Սոֆիա՝ կին սմբատայ, յերկրպագութիւն սուրբ խաչին»¹:

Մեջբերումից երեսում է, որ Տամալեկս գյուղի ապստամբները գործել են ավելի համարձակ, դիմադրել են առավել համառությամբ: Տամալեկսի ապրուամբությունը նույնպես ճնշվել է 916 թվականին:

Այսպիսով, առաջին ապստամբությունը սկսվել է 910-ական թվականների սկզբներին և վերջնականապես ճնշվել է 916 թվականին, որից հետո Սյունիքի գյուղացիական շարժումը որոշ ժամանակ թուլանում է:

Երկրորդ էտապում՝ 930-ական թվականներին (Սյունյաց եպիսկոպոս Հակոբ Դվինեցու 918—958 թթ. ժամանակ) նախ ապստամբում են Ավելադաշտ գյուղի «շինականները»: Դժբախտաբար այս մասին մնացել են աղքատիկ տեղեկություններ: Ստեփանոս Օրբելյանը, որպես աշխարհիկ և հոգենոր ֆեոդալների ներկայացուցիչ, այս դեպքերը նկարագրելիս ապստամբներին համարում է «ավագակներ» և «շարագործներ»: Երկրորդ էտապում ապստամբության կենտրոնը եղել է Ավելադաշտը, որտեղ հավաքվել են նաև շրջակա գյուղերի ապրուամբ գյուղացիները, որոնց թվում նաև ավերված ցուրաբերդցիները: «Դարձեալ յայնմ ժամանակի աւազականոցն, որ հանդէպ վանիցն կայր ի վերայ ուսոյն, որ Աւելադաշտն կոչեն, զոր վերագոյն ասացաք լի էր ելուզակ մարդովք, որք բազում ոճիրս գործէին և յոլով նեղութիւնս հասուցանէին եղեացն և այլ շրջակայ սահմանացն: Յայնժամ խնդրէ եպիսկոպոսն յիշխանացն Սիւնեաց և հրաման առեալ՝ հալածական արար զարսն, քանդեալ աւերեաց զապստամբանոց նոցին և հիմնախիլ արար, և զտեղին սահմանովն սեպհականեաց եկեղեցոյն, և մեծամեծ և ահագին նզովիւք փակեաց, զի մի ոք այլ իշխեսցէ անդ բնակիլ կամ շինութիւն առնել»², — գրում է Ստեփանոս Օրբելյանը:

Այս անգամ ևս ապստամբները հարձակվում են Տաթևի վանքի վրա, փախուստի մատնում միաբաններին և ավերում վանքը հարակից շենքերով:

Տամալեկսի գյուղացիները, որ ակտիվորեն մասնակցել էին 910-ական թվականների ապստամբությանը, գրեթե պահպանել են իրենց նախկին իրավունքները: Սյունյաց Հակոբ Դվինեցի եպիսկոպոսը, ապստամբության առաջին էտապի պարտությունից հետո, փորձում է գրավել Տամալեկս գյուղի հոգերը և ճորտացման ենթարկել այդ գյուղի գյուղացիներին, որի պատճառով էլ նրանք ավելի մեծ ակտիվություն են հանդես բերում:

Ապստամբությունն այնքան լայն շափեր է ընդունում, որ Հակոբ Դվինեցի եպիսկոպոսը խուժապահար դիմում է Սմբատ իշխանի օգնությանը, իսկ վերջինս արագ կերպով հավաքելով իր զորագնդերը, դաժանորեն ճնշում է ապրուամբությունը: Ապստամբության ճնշումից հետո Սմբատ Սյունին և տիկին Սոֆիան 1000 դահեկանով գնում են Տամալեկսը և նվիրում Տաթևի վանքին, իսկ բնակիչներին, որոնք չեն ցանկանում ենթարկվել Տաթևի վանքին, բռնությամբ հեռացնում են Տամալեկս գյուղից:

¹ Ստեփանոս Օրբելյան. Պատմութիւն տանն Սիսական, էջ 197:

² Նույն տեղում, էջ 188:

Հակոբ Դվինեցի և պիտի պատամբությամբ այս նոր ապստամբությունը տևել է 20 տարի։ Այդ ցուց է տալիս, որ Սմբատ Սյունու կողմից ապստամբությունը ձնշելուց հետո, գյուղացիական ելույթները շարունակվել են նաև հետագայում՝ 940-ական թվերին։

Երրորդ ապստամբությունը տեղի է ունեցել 10-րդ դարի վերջին տասնամյակում՝ Սյունյաց թագավորության շրջանում։

10-րդ դարի երկրորդ կեսի ֆեոդալական մասնատվածության պայմաններում Հայաստանում ստեղծվում են մի քանի մանր ֆեոդալական թագավորություններ, այդ թվում՝ և 970 թվականին՝ Սյունիքում։

Երկրորդ ապստամբության ձնշումից հետո մի քանի տասնամյակի ընթացքում գյուղացիները կրկին կենտրոնանում են լեռնային հարմար դիրք ունեցող Ցուրաբերդում՝ վերականգնում գյուղն ու բերդը։ Ցուրաբերդ հավաքված գյուղացիները 990-ական թվականներին կրկին ոտքի և լնում ընդդեմ ճորտացման և հողաղրկման։

990-ական թվականներին Սյունյաց թևմի և պիտի պատամբության Հակոբը գործոն կերպով ընդարձակում է Տաթևի վանքի կալվածքները և ծանրացնում ճորտ գյուղացիների շահագործումը, որի դեմ գյուղացիները պատրաստվում են ապստամբության։ 999 թվականին ապստամբները Ցուրաբերդից դուրս գալով շարժվում են Տաթևի վանքի վրա։ Ապստամբված ջոկատներին միանում են Տաթևի վանքի ճորտ գյուղացիները։ Ապստամբները դատաստան են աւեսնում միաբանների մի մասի հետ, վերցնում վանքի գանձերը տեղափոխում Ցուրաբերդ։ Հակոբ եպիսկոպոսը մեկնում է Սյունյաց թագավորության կենտրոնը՝ Կապան, օգնություն խնդրում Վասակ թագավորից։ Կապանից վերադառնալիս ապստամբների մի ջոկատ «Խորնացուրայի» մոտ հարձակվում է նրա վրա և սպանում։

Հակոբ եպիսկոպոսին փոխարինող Գրիգոր և պիտի պատամբությունը 1000 թվականին Սյունյաց Վասակ թագավորը թագուհի Շահանդուխտի հորդորանքով մի զորագունդ է հանձնում իշխանաց-իշխան Սևադային և ուղարկում ապօստամբությունը ձնշելու։ Սևադան արագ գործողություններով վերջնականապես ձնշում է ապստամբությունը, ապստամբների մեծ մասին սրի քաշում և հիմնահատակ ավերում ապստամբության կենտրոն Ցուրաբերդը։ Այդ մասին Ստեփանոս Օրբելյանը դրում է. «... քակեաց զանիծաբնակ քարն Ցուրայ և բնաշինչ յատակեաց¹։»

Այսպիսով, ավարտվում է Սյունիքի գյուղացիական ապստամբությունը։ Ստեփանոս Օրբելյանը ավերված Ցուրաբերդը մինչև անդամ ընակավայր չի համարում, այլ անբնակ «քար» — սովորական հողամաս։ 10-րդ դարի գյուղացիական ապստամբությունը վերջնականապես ձնշող Սյունյաց իշխանները հոգևորականության կողմից արժանանում են «աստվածաւեր» և «աստվածաւալաշ» տիտղոսների։

11—12-րդ դարերում Սյունյաց իշխանները Տաթևի վանքին հանձնում են նոր գյուղեր. այն դառնում է ամենախոշոր կալվածքներ և մեծ քանակությամբ ճորտեր ունեցող վանքերից մեկը Հայաստանում։

Սյունիքի 10-րդ դարի գյուղացիական ապստամբությունը, որը ընդմիջումներով, իր երեք էտապներով տևեց մոտ 100 տարի, ձնշվել է մեծ դժվարությամբ։ Այդ ապստամբությունը սուր սոցիալական շարժում էր շահագործվող գյուղացիության կողմից ընդդեմ աշխատքիկ և հոգեոր ֆեոդալների։

¹ Ատեփաննոս Օրբելյան, Պատմութիւն տանն Սիսական, էջ 218.